Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գույանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.***
   Անի Խաչատուրյան
   Մերի Աղաբաբյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
   Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ,
   Ֆինանսատնտեսական վարչության վարչատնտեսական սպասարկման բաժնի թարգմանիչ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Այցելություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Յանգլինգ քաղաք, 2023 թվականի մայիսի 14-ից մինչև 2023 թվականի հունիսի 6-ը

4. ***Հրավիրող կողմը***
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարություն

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն «Բնապահպանական քաղաքակրթություն և կանաչ զարգացում զարգացող երկրների համար» ("Seminar on Ecological Civilization and Green Development for Developing Countries") թեմայով դասընթացին:

6. ***Քննարկված թեմաները***

2023 թվականի մայիսի 14-ից մինչև 2023 թվականի հունիսի 6-ը կայացած «Բնապահպանական քաղաքակրթություն և կանաչ զարգացում զարգացող երկրների համար» թեմայով դասընթացի շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Չինաստանի Ժողովրդական Հանրապետության բնապահպանական քաղաքականության և կանաչ զարգացման հայեցակարգի ներկայացում,
- Ընդհանուր ակնարկ Չինաստանի ներկայիս տնտեսության մասին. անցում «կանաչ» զարգացմանը և համեմատական վերլուծության ներկայացում վերջին 30 տարիների դրությամբ,
- Կանաչ զարգացմանն ուղղված մի շարք առաջնային միջոցառումների և մեխանիզմների ներկայացում,
- Գյուղատնտեսական արտադրության և սոցիալական զարգացման բնապահպանական խնդիրների վերլուծում զարգացող երկրների համար,
- Բնական ռեսուրսների կառավարման ներկայացում և դրանց կայուն կառավարման մոդելի ներկայացում,
- Էկոլոգիական քաղաքակրթությունը և տարածաշրջանային տնտեսության կայուն զարգացումն ուրբանիզացիայի գործընթացում,
- Էկոլոգիական քաղաքակրթության դերը տնտեսական զարգացման բնագավառում,
- Չինաստանի ջրաճահճային տարածքների պահպանության և կայուն զարգացման, ճահճային տարածքների էկոլոգիական կարևոր գործառույթների ներկայացում,
- Կանաչ զարգացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման արշավների և միջոցառումների ներկայացում,
- Հողերի դեգրադացիայի կանխմանն ուղղված միջոցառումների ներկայացում և դրա բացասական հետևանքների վերլուծությունը գյուղատնտեսական արտադրության և մարդկանց կյանքի և առողջության որակի վրա,
- Չինաստանի՝ էկոգյուղատնտեսական արդյունաբերության զարգացմանն ուղղված քաղաքականության ներկայացում,
- Չինաստանի՝ բնապահպանական քաղաքակրթության ստեղծման տեսլականի/մոդելի ներկայացում:

Դասընթացին ներկա էին 40-ից ավել մասնակից՝ 12 երկրից (Կուբա, Կոստա Ռիկա, Գանա, Քենիա, Նիգերիա, Նեպալ, Շրի Լանկա, Ուզբեկստան, Սիերա Լեոնե, Լեսոտո և այլն):

## 7. ***Հանդիպումները, ելույթները.***

- Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում գտնվելու ընթացքում հայաստանյան պատվիրակությունն այցելեց Պեկինի Սիատոնգշան ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների ցուցադրական

կենտրոն և տեղում ծանոթացավ նորարարական տեխնոլոգիաներին և դրանց կիրառման մեխանիզմներին,

- Այցելություն Չինաստանի սննդի և ֆերմենտացման արդյունաբերության հետազոտական ինստիտուտ տեղում ծանոթանալու մանրէաբանական ռեսուրսների հետազոտությանը, այդ թվում՝ լաբորատոր,
- Այցելություն Յանգլինգ Սիանգլին բիոտեխնոլոգիական ընկերություն՝ ծանոթանալու կենսաբանական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի ժամանակակից տեխնոլոգիաներին,
- Մանակցություն Սան Սիմիաոյի չինական ավանդական բժշկության մշակութային փառատոնի բացման արարողությանը և չինական բժշկության միջազգային համաժողովին (ք. Տոնգչուան),
- Մանակցություն Աղքատության հաղթահարման և կայուն զարգացմանը նվիրված համաժողովի բացման արարողությանը և դրան հաջորդող քննարկումներին,
- Այցելություն «Յուանշան երազանքների ագարակ» կոմպլեքս համալիր՝ տեղում հետազոտելու էկոգյուղատնտեսական և տուրիզմի համապարփակ զարգացման մոտեցումները:

8. ***<u>Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>***

Քննարկումների, այցելությունների ընթացքում կարևորվեց ոլորտային համագործակցության արդյունավետությունը զարգացող երկրների հետ: Փորձի փոխանակման արդյունքում Չինաստանի կողմից կարևոր նշանակություն տրվեց նմանատիպ ձևաչափով բազմակողմ դասընթացների կազմակերպմանը՝ ուղղված բազմակողմ համագործակցության հնարավորության ընձեռմանն ու ընդլայնմանը:

Աղքատության հաղթահարման և կայուն զարգացմանը նվիրված համաժողովի ընթացքում ստորագրվեց բազմակողմ փոխըմռնման հուշագիր Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ-երկրների միջև:

9. ***<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>***

Ինտերակտիվ քննարկումների, այցելությունների ընթացքում ձեռք բերվեցին նոր գիտելիքներ բնապահպանական քաղաքականության և կանաչ զարգացման վերաբերյալ՝ հիմնված զարգացած երկրի՝ Չինաստանի Ժողովրդական

Հանրապետության քաղած դասերի և լավագույն փորձի վրա: Դասընթացի ավարտին հայաստանյան պատվիրակության կողմից ներկայացվեց Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) մասին ընդհանուր ակնարկ, ինչպես նաև ՀՀ-ում առկա բնապահպանական մի շարք խնդիրներն ու դրանց լուծման տեսլականը և ՀՀ-ի կողմից իրականացվող անցում «կանաչ» զարգացմանն ուղղված միջոցառումները: Ներկայացվեց շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային համագործակցության, այն է՝ ՀՀ-ի կողմից վավերացրած և ստորագրած մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և հնարավոր նոր գործընկերության ընդլայնման ուղիները:

Գործուղվողներ՝

Ա. Խաչատուրյան

Մ. Աղաբաբյան

09.06.2023թ.